

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

**«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2005 թվականի մայիսի 25-ի ՀՕ-206 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9.2-րդ հոդվածում՝

1) առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքներն են (այսուհետ՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ).».

2) աղյուսակում՝

ա. ԱՏԳ ԱԱ 0209 ծածկագրին դասվող ապրանքախմբի անվանման մեջ «առանձնացված» բառից հետո լրացնել «խոզի ճարպ և» բառերը,

բ. ԱՏԳ ԱԱ 2501 00 91 ծածկագրին վերաբերող տողը հանել.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ և 3-րդ մասեր.

«2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում արտադրված կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածք ներմուծված՝ շալցված կամ ցանկացած այլ կերպ տարայավորված (փաթեթավորված)՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ապրանքների վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում օտարման ցանկացած փուլում դրոշմապիտակի առկայությունը պարտադիր է, եթե այդ ապրանքներն օտարվում են նույն տարայավորմամբ (փաթեթավորմամբ) ու ապրանքային տեսքով՝ առանց քաշը (ծավալը) փոփոխելու, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի:

3. ԱՏԳ ԱԱ 0405, 0901, 0902, 0903 00 000, 1806 և 2101 ծածկագրերին դասվող՝ մինչև 100 գրամ (ներառյալ) կամ 100 գրամից առավելագույնը 10 տոկոս շեղումով պարունակություն ունեցող՝ տարայավորված (փաթեթավորված) ապրանքները ենթակա չեն դրոշմապիտակներով դրոշմավորման:»:

Հոդված 2. Օրենքի 9.4-րդ հոդվածի 4-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Սույն օրենքի 9.2-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակում նշված՝ ԱՏԳ ԱԱ 0207, 0209, 0210, 0406, 1601, 1602, 1603, 1604 և 1605 ծածկագրերին դասվող ապրանքատեսակների՝ հայտում ներկայացված քաշի և օտարման պահին փաստացի քաշի միջև առկա դրական տարբերությունը չի համարվում ապրանքների դրոշմավորման կանոնների խախտում, եթե այդ տարբերությունը չի գերազանցում հայտում ներկայացված քաշի 10 տոկոսը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հոկտեմբերի 1-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ